ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ
ИСТОРИЧЕСКИЙ ФАКУЛЬТЕТ

YEREVAN STATE UNIVERSITY
FACULTY OF HISTORY

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹ

ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ

ИСТОРИЯ И КУЛЬТУРА

АРМЕНОВЕДЧЕСКИЙ ЖУРНАЛ

HISTORY AND CULTURE

JOURNAL OF ARMENIAN STUDIES

№ 1

ԵՐԵՎԱՆ - ЕРЕВАН - YEREVAN
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ, ИЗДАТЕЛЬСТВО ЕГУ, YSU PRESS
2020

Հրատարակվում է Երևանի պետական համալսարանի
Պատմության ֆակուլտետի գիտական խորհրդի որոշմամբ

Գլխավոր խմբագիր՝ պ.գ.դ., պրոֆ. **Էդիկ Մինասյան**
Խմբագրական խորհուրդ՝
Արման Եղիազարյան (խմբագիր, պ.գ.դ., դոց.), **Արամ Սիմոնյան** (ԵՊՀ Հայագիտական հետազոտությունների ինստիտուտի տնօրեն, ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ, պ.գ.դ., պրոֆ.), **Աշոտ Մելքոնյան** (ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, պ.գ.դ., պրոֆ.), **Արտակ Մովսիսյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Ալբերտ Ստեփանյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Հայկ Ավետիսյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Հայրապետ Մարգարյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Լևոն Չուգասզյան** (արվեստագիտ. դոկտ., պրոֆ.), **Համլետ Պետրոսյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Իգիթ Ղարիբյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Հենրիկ Աբրահամյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Հայկազ Հովհաննիսյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Աշոտ Ներսիսյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Աշոտ Հայրունի** (պ.գ.դ., պրոֆ.), **Վալերի Թունյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Վանիկ Վիրաբյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Ռաֆիկ Նահապետյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Հակոբ Հարությունյան** (պ.գ.դ., դոց.), **Հովիկ Գրիգորյան** (պ.գ.թ., դոց.), **Մխիթար Գաբրիելյան** (պ.գ.թ., դոց.), **Էդգար Հովհաննիսյան** (պ.գ.թ., դոց.):

Главный редактор - докт. ист. наук, проф. **Эдик Минасян**
Редакционная коллегия:
Арман Егиазарян (редактор, д.и.н., доц.), **Арам Симонян** (директор Института Арменоведческих исследований ЕГУ, членкор. АН РА, д.и.н., проф.), **Ашот Мелконян** (академик АН РА, д.и.н., проф.), **Артак Мовсисян** (д.и.н., проф.), **Альберт Степанян** (д.и.н., проф.), **Айк Аветисян** (д.и.н., проф.), **Айрапет Маргарян** (д.и.н., проф.), **Левон Чугасзян** (докт. искусствовед. наук, проф.), **Гамлет Петросян** (д.и.н., проф.), **Игит Гарибян** (д.и.н., проф.), **Генрих Абраамян** (д.и.н., проф.), **Айказ Оганесян** (д.и.н., проф.), **Ашот Нерсесян** (д.и.н., проф.), **Ашот Айруни** (д.и.н., проф.), **Валерий Тунян** (д.и.н., проф.), **Ваник Вирабян** (д.и.н., проф.), **Рафик Наапетян** (д.и.н., проф.), **Акоб Арутюнян** (д.и.н., доц.), **Овик Григорян** (к.и.н., доц.), **Мхитар Габриелян** (к.и.н., доц.), **Эдгар Оганнисян** (к.и.н., доц.).

Editor-in-Chief - Doctor of Sciences, prof. **Edik Minasyan**
Editorial Board:
Arman Yeghiazaryan (editor, Doctor of Sciences, associate prof.), **Aram Simonyan** (Director of YSU Institute for Armenian Studies, Corresp. member of NAS RA, Doctor of Sciences, prof.), **Ashot Melkonyan** (Academician of NAS RA, Doctor of Sciences, prof.), **Artak Movsisyan** (Doctor of Sciences, prof.), **Albert Stepanyan** (Doctor of Sciences, prof.), **Hayk Avetisyan** (Doctor of Sciences, prof.), **Hairapet Margaryan** (Doctor of Sciences, prof.), **Levon Chugaszyan** (Doctor of Arts, prof.), **Hamlet Petrosyan** (Doctor of Sciences, prof.), **Igit Gharibyan** (Doctor of Sciences, prof.), **Henrik Abrahamyan** (Doctor of Sciences, prof.), **Haikaz Hovhannisyan** (Doctor of Sciences, prof.), **Ashot Nersisyan** (Doctor of Sciences, prof.), **Asot Hayruni** (Doctor of Sciences, prof.), **Valeri Tunyan** (Doctor of Sciences, prof.), **Vanik Virabyan** (Doctor of Sciences, prof.), **Rafik Nahapetyan** (Doctor of Sciences, prof.), **Hakob Harutunyan** (Doctor of Sciences), **Hovik Grigoryan** (PhD of History, associate prof.), **Mkhitar Gabrielyan** (PhD of History, associate prof.), **Edgar Hovhannisyan** (PhD of History, associate prof.).

ISSN 1829-2771

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ
СОДЕРЖАНИЕ / CONTENT

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ / ИСТОРИЯ / HISTORY

Էդիկ Մինասյան – ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ՆԵՐԴՐՈՒՄԸ ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՄԵԾ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՀԱՂԹԱՆԱԿԻ ԳՈՐԾՈՒՄ (1941-1945 ԹԹ.) 8

***Эдик Минасян** – ВКЛАД АРМЯНСКОГО НАРОДА В ПОБЕДУ В ВЕЛИКОЙ ОТЕЧЕСТВЕННОЙ ВОЙНЕ (1941-1945 ГГ.).* 32

***Edik Minasyan** – THE CONTRIBUTION OF THE ARMENIAN PEOPLE TO THE VICTORY IN THE WORLD WAR II (1941-1945).* 33

Արտակ Մովսիսյան – ՀԱՅ ԷԹՆՈՍԻ ՏԱՐԱԾՄԱՆ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ՄԵՐ ԹՎԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՍԿԶԲԻՆ (ԸՍՏ ՍՏՐԱԲՈՆԻ ՎԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ) 34

***Артак Мовсисян** – ГЕОГРАФИЯ РАСПРОСТРАНЕНИЯ АРМЯНСКОГО ЭТНОСА НАКАНУНЕ НАШЕЙ ЭРЫ (ПО СВЕДЕНИЯМ СТРАБОНА)* 40

***Artak Movsisyan** – THE GEOGRAPHY OF THE SPREAD OF THE ARMENIAN ETHNOS ON THE EVE OF OUR ERA (ACCORDING TO STRABO)* 40

Միքայել Մալխասյան – ՄԵԾ ՀԱՅՔԻ ԱՐԵՎՄՏՅԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ ԸՍՏ ԿԼԱՎԴԻՈՍ ՊՏՂՈՄԵՈՍԻ «ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅԱՆ» 41

***Микаэл Малхасян** – ЗАПАДНЫЕ ГРАНИЦЫ ВЕЛИКОЙ АРМЕНИИ ПО "ГЕОГРАФИИ" КЛАВДИЯ ПТОЛЕМЕЯ.* 47

***Mikayel Malkhasyan** – THE WESTERN BORDERS OF GREATER ARMENIA IN CLAUDIUS PTOLEMY'S "GEOGRAPHY".* 47

Էդգար Վարշամյան – ՀԱՅԱՍՏԱՆԸ ՀՌՈՄԵԱ-ՊԱՐՍԿԱԿԱՆ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅԱՆ ԾԻՐՈՒՄ. ԱՐՇԱԿ Բ-Ի ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ 49

***Эдгар Варшамян** – АРМЕНИЯ В РАЗГАР РИМСКО-ПЕРСИДСКОГО КОНФЛИКТА: ВНЕШНЯЯ ПОЛИТИКА АРШАКА II.* 60

***Edgar Varshamyan** – ARMENIA IN THE MIDST OF THE ROMAN-PERSIAN CONFLICT: THE FOREIGN POLICY OF ARSHAK II.* 61

Արգիշտի Վարդանյան – ՄԱՆՎԵԼ ՄԱՄԻԿՈՆՅԱՆԸ ՄԵԾ ՀԱՅՔԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԽՆԱՄԱԿԱԼ ԵՎ ԿԱՌԱՎԱՐԻՉ 62

***Аргишти Варданян** – МАНВЕЛ МАМИКОНЯН – РЕГЕНТ И УПРАВЛЯЮЩИЙ ЦАРСТВОМ ВЕЛИКОЙ АРМЕНИИ.* 68

***Argishti Vardanyan** – MANVEL MAMIKONYAN – REGENT AND RULER OF THE KINGDOM OF GREATER ARMENIA.* 68

Արման Եղիազարյան – ԲԱԳՐԱՏՈՒՆԻՆԵՐԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՊԱՌԱԿՏՄԱՆ ՊԱՏՃԱՌ ԴԱՐՁԱԾ ՄԻ ԴԱՎԱԴՐՈՒԹՅԱՆ ՇՈՒՐՋ 70

***Арман Егиазарян** – О ЗАГОВОРЕ, ПРИВЕДШЕМ К РАСКОЛУ БАГРАТИДСКОГО ЦАРСТВА.* 79

***Arman Yeghiazaryan** – ON A CONSPIRACY THAT CAUSED THE SPLIT OF THE BAGRATUNIES KINGDOM.* 79

Արարատ Ստեփանյան – ՓԻԼԱՐՏՈՍ ՎԱՐԱԺՆՈՒՆՈՒ ՊԱՏՎԱՏԻՏՂՈՍՆԵՐԸ 81

***Арарат Степанян** – ПОЧЕТНЫЕ ТИТУЛЫ ФИЛАРЕТА ВАРАЖНУНИ.* 86

***Ararat Stepanyan** – THE HONORARY TITLES OF PHILARETOS BRACHAMIOS.* 86

Սեյրան Զաքարյան – ԱԶԳԻ ԲՆՈՒԹԱԳՐՄԱՆ ՀԱՐՑԸ ՀԱՅՈՑ ԻՆՔՆՈՒԹՅԱՆ ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ՀԱՐԱՑՈՒՅՑՈՒՄ (ԳՐԻԳՈՐ ՏԱԹԵՎԱՑԻ ԵՎ ՂԱԶԱՐ ՋԱՀԿԵՑԻ).....88

***Сейран Закарян** – ПРОБЛЕМА ХАРАКТЕРИСТИКИ НАЦИИ В ХРИСТИАНСКОЙ ПАРАДИГМЕ АРМЯНСКОЙ ИДЕНТИЧНОСТИ (ГРИГОР ТАТЕВАЦИ И ГАЗАР ДЖАХКЕЦИ).*.....97

***Seyran Zakaryan** – THE PROBLEM OF CHARACTERIZATION NATION IN THE CHRISTIAN PARADIGM OF ARMENIAN IDENTITY (GRIGOR TATEVATSI AND GHAZAR JAHKETSI).*.....98

Սարգիս Բալդարյան – ԿՈՍՏԱՆԴ ՋՈՒՂԱՅԵՑՈՒ ՎԱՃԱՌԱԿԱՆԱԿԱՆ ՁԵՌՆԱՐԿ-ՆԵՐԻ ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅՈՒՆԸ ՆՈՐ ՋՈՒՂԱՅԻ ԱՌԵՎՏՐԱԿԱՆ ՑԱՆՑՈՒՄ.....99

***Саркис Балдарян** – ЦИРКУЛЯЦИЯ КОММЕРЧЕСКИХ УЧЕБНИКОВ КОНСТАНТА ДЖУГАЕЦИ В ТОРГОВОЙ СЕТИ НОВОЙ ДЖУЛЬФЫ.*..... 106

***Sargis Baldaryan** – THE CIRCULATION OF COMMERCIAL HANDBOOKS OF CONSTANT OF JULFA IN THE TRADE NETWORK OF NEW JULFA.* 106

Արարատ Հակոբյան – 1920 Թ. ԹՈՒՐՔ-ՀԱՅԿԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՍԿՍՄԱՆ ՕՐՎԱ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ (ՊԱՏԵՐԱԶՄԻ 100-ԱՄՅԱԿԻ ԱՌԻԹՈՎ)..... 108

***Арарат Акопян** – К ВОПРОСУ О ДАТЕ НАЧАЛА ТУРЕЦКО-АРМЯНСКОЙ ВОЙНЫ 1920 Г. (К 100-ЛЕТИЮ ВОЙНЫ).*..... 117

***Ararat Hakobyan** – ABOUT THE DATE OF THE BEGINNING OF THE TURKISH-ARMENIAN WAR IN 1920 (TO THE 100TH ANNIVERSARY OF THE WAR).*..... 117

Նելլի Մինասյան – 1920 ԹՎԱԿԱՆԻ ԹՈՒՐՔ-ՀԱՅԿԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ ԵՎ ՀԱՄԱ-ԹՅՈՒՐՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ..... 118

***Нелли Минасян** – ТУРЕЦКО-АРМЯНСКАЯ ВОЙНА 1920 ГОДА И ПЛАНЫ ПАН-ТЮРКИЗМА.* 123

***Nelli Minasyan** – THE TURKISH-ARMENIAN WAR OF 1920 AND THE PROGRAMS OF PAN-TURKİSM.*..... 123

Սուրեն Ավետիսյան – ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԱՐՄԻՐ ԽԱՉԻ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒ-ԹՅՈՒՆԸ ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՄԵԾ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՏԱՐԻՆԵՐԻՆ..... 124

***Сурен Аветисян** – ДЕЯТЕЛЬНОСТЬ ОБЩЕСТВА КРАСНОГО КРЕСТА АРМЕНИИ В ГОДЫ ВЕЛИКОЙ ОТЕЧЕСТВЕННОЙ ВОЙНЫ.* 131

***Suren Avetisyan** – THE ACTIVITY OF RED CROSS SOCIETY OF ARMENIA IN THE YEARS OF THE GREAT PATRIOTIC WAR.* 131

Առնակ Սարգսյան – ԸՆՏՐԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԺՈՂՈ-ՎՐԴԱՎԱՐԱՑՄԱՆ ԻՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ (ՀՀ 2018 Թ. ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐԻ-ՆԱԿՈՎ)..... 132

***Арнак Саргсян** – УЧАСТИЕ В ИЗБИРАТЕЛЬНОМ ПРОЦЕССЕ В РЕАЛИЯХ ДЕМО-КРАТИЗАЦИИ (НА ПРИМЕРЕ ВЫБОРОВ В РЕСПУБЛИКЕ АРМЕНИИ В 2018 Г.).* 139

***Arnak Sargsyan** – PARTICIPATION IN THE ELECTORAL PROCESS IN THE REALITIES OF DEMOCRATIZATION (ON THE EXAMPLE OF THE REPUBLIC OF ARMENIA IN 2018 ELECTIONS).*..... 139

Գայանե Թովմասյան, **Ռուբիկ Թովմասյան** – ՁԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՅՈՒՐԸՆ-ԿԱԼՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱՊԱԳԱՅԻ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ (ԱՇԽԱՐՀ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆ)..... 140

***Гаяне Товмасян**, **Рубик Товмасян** – БУДУЩИЕ ТЕНДЕНЦИИ РАЗВИТИЯ ТУРИЗМА И ИНДУСТРИИ ГОСТЕПРИИМСТВА В МИРЕ И В АРМЕНИИ.*..... 149

Gayane Tovmasyan*, *Rubik Tovmasyan *– FUTURE TRENDS OF TOURISM AND HOSPITALITY INDUSTRY DEVELOPMENT IN THE WORLD AND IN ARMENIA.* 149

Արշալույս Տետեյան – ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՃԱՆԱՉՄԱՆ ՀԱՐՑԸ ԵՎ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ ԲԱՆԱՁԵՎԵՐՈՒՄ 150

Аршалуйс Тетеян *– ВОПРОС ПРИЗНАНИЯ ГЕНОЦИДА АРМЯН И ПРОБЛЕМА НАГОРНОГО КАРАБАХА В РЕЗОЛЮЦИЯХ ЕВРОПЕЙСКОГО ПАРЛАМЕНТА.* 156

Arshaluys Teteyan *– RECOGNITION OF ARMENIAN GENOCIDE AND NAGORNO-KARABAKH PROBLEM IN THE RESOLUTIONS OF EUROPEAN PARLIAMENT.* 156

ՀՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱԶԳԱԳՐՈՒԹՅՈՒՆ / АРХЕОЛОГИЯ И ЭТНОГРАФИЯ / ARCHAEOLOGY AND ETHNOGRAPHY

Ռաֆիկ Նահապետյան – ՀԱՅԿԱԿԱՆ ԼԵՌՆԱՇԽԱՐՀԸ՝ ԱՆԱՍՆԱՊԱՀԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՀՆԱԳՈՒՅՆ ԿԵՆՏՐՈՆ (ԸՍՏ ՀՆԱԳԻՏԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐԻ ԵՎ ԱՆՏԻԿ ԳՐԱՎՈՐ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ) 157

Рафик Наапетян *– АРМЯНСКОЕ НАГОРЬЕ - ДРЕВНЕЙШИЙ ЦЕНТР СКОТОВОДЧЕСКОЙ КУЛЬТУРЫ (ПО АРХЕОЛОГИЧЕСКИМ МАТЕРИАЛАМ И АНТИЧНЫМ ПИСЬМЕННЫМ ИСТОЧНИКАМ).* 162

Rafik Nahapetyan *– ARMENIAN HIGHLAND - THE MOST ANCIENT CENTRE OF CATTLE BREEDING CULTURE (ACCORDING TO ARCHAEOLOGICAL MATERIALS AND ANCIENT WRITTEN SOURCES).* 162

Քրիստինա Այվազյան – ԲԱՐԵԳՈՐԾՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՀԵՔԻԱԹՆԵՐՈՒՄ 163

Кристина Айвазян *– БЛАГОТВОРИТЕЛЬНОСТЬ В АРМЯНСКИХ НАРОДНЫХ СКАЗКАХ.* 174

Christina Ayvazyan *– CHARITY IN THE ARMENIAN FAIRY TALES.* 175

ԱՐՎԵՍՏ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹ / ИСКУССТВО И КУЛЬТУРА / ART AND CULTURE

Գեղամ Ասատրյան, **Ավետիս Գրիգորյան** – ՄԱՔՐԱՎԱՆՔԻ ԽԱՉՔԱՐԵՐԸ (XII-XIV ԴԴ.) 176

Гегам Асатрян*, *Аветис Григорян *– ХАЧКАРЫ МАКРАВАНКА (XII-XIV ВВ.).* 181

Gegham Asatryan*, *Avetis Grigoryan *– THE CROSSTONES OF MAKRAVANK (XII-XIV CENTURIES).* 181

Մոնթե Մաթևոսյան – ՋՐԱՌԱՏԻ Ս. ԿԱՐԱՊԵՏ ԵԿԵՂԵՑՈՒ ԽԱՉՔԱՐԵՐԸ 185

Монте Матевосян *– ХАЧКАРЫ ЦЕРКВИ СВЯТОГО КАРАПЕТА В ДЖРАРАТЕ.* 188

Monte Matevosyan *– THE KHACHKARS OF JRARAT ST. KARAPET CHURCH.* 188

Շուշանիկ Համբարյան – ԵՐՈՒՍԱՂԵՄԻ Հ[մր] 1970 ԱՎԵՏԱՐԱՆԸ ԵՎ ՄԱՆՐԱՆԿԱՐՆԵՐԻ ՈՒՇ ՇՐՋԱՆԻՆ ԲՆՈՐՈՇ ՊԱՏԿԵՐԱԳՐԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 191

Шушаник Амбарян *– РУКОПИСЬ № 1970 ЕВАНГЕЛИЯ ИЕРУСАЛИМА И ИКОНОГРАФИЧЕСКИЕ ОСОБЕННОСТИ МИНИАТЮР, ХАРАКТЕРНЫЕ ДЛЯ ПОЗДНЕГО ПЕРИОДА.* 199

Shushanik Hambaryan *– № 1970 GOSPEL OF JERUSALEM AND THE ICONOGRAPHIC FEATURES OF THE MINIATURES CHARACTERISTIC OF THE LATE-PERIOD.* 199

ՍՓՅՈՒՌՔԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ / ДИАСПОРАВЕДЕНИЕ / DIASPORA STUDIES

Հրաձին Վարդանյան – ՍՓՅՈՒՌՔԻ ՏԻՊԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԱՅ ՍՓՅՈՒՌՔԸ..... 202
Грацин Варданян *– ТИПОЛОГИЯ ДИАСПОРЫ И АРМЯНСКАЯ ДИАСПОРА.* 207
Hratsin Vardanyan *– TYPOLOGY OF DIASPORAS AND THE ARMENIAN DIASPORA.* 208

Ալիկ Ղարիբյան, **Գայանե Գալստյան** – ՀՅԴ-Ի ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՆԱՎՈՐՈՒՄԸ ԱՄՆ-ՈՒՄ 209
Алик Гарибян, ***Гаяне Галстян*** *– НАЧАЛО ДЕЯТЕЛЬНОСТИ АРФ ДАШНАКЦУТЮН В США.* 214
Alik Gharibyan, ***Gayane Galstyan*** *– THE BEGINNING OF ARF DASHNAKTSUTYUN ACTIVITY IN THE USA.* 215

Էդգար Հովհաննիսյան – ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹՅԱՆ ԿԻՐԱԿՆՈՐՅԱ ԴՊՐՈՑՆԵՐԻ ՀԻՄՆՈՒՄԸ ԵՎ ՆՐԱՆՑ ԴԵՐԸ ՀԱՅԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՄ 216
Эдгар Ованесян *– СОЗДАНИЕ ВОСКРЕСНЫХ ШКОЛ КИЛИКИЙСКОГО КАТОЛИКОСАТА И ИХ РОЛЬ В СОХРАНЕНИИ АРМЯНСКОЙ ИДЕНТИЧНОСТИ.* 225
Edgar Hovhannisyan *– THE FOUNDATION OF SUNDAY SCHOOLS OF THE CATHOLICOSATE OF THE GREAT HOUSE OF CILICIA AND THEIR ROLE IN PRESERVATION OF THE ARMENIAN IDENTITY.* 225

Մարիամ Հակոբյան – ՀԱՅԱՍՏԱՆՅԱՑ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՒ ՀՈՒՆԱՀԱՅՈՑ ԹԵՄԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ ԵՎ ՆՐԱՆՑ ՎԱՐՉԱԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐԸ 1920-1930-ԱԿԱՆ ԹԹ. 226
Мариам Акопян *– ФОРМИРОВАНИЕ ЕПАРХИЙ АРМЯНСКОЙ АПОСТОЛЬСКОЙ ЦЕРКВИ В ГРЕЦИИ И ИХ АДМИНИСТРАТИВНО-ДЕМОГРАФИЧЕСКОЕ ОПИСАНИЕ В 1920-1930-Х ГГ.* 231
Mariam Hakobyan *– THE FORMATION OF THE GREEK-ARMENIAN DIOCESES OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH AND THEIR ADMINISTRATIVE-DEMOGRAPHIC DESCRIPTION IN THE 1920s AND 1930s.* 231

Նարինե Նուշերվանյան – «ՍՓՅՈՒՌՔ-ՀՅՈՒՐԸՆԿԱԼՈՂ ԵՐԿԻՐ-ՀԱՅՐԵՆԻՔ» ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՌԱՆԿՅՈՒՆԱՁԵՎ ՄՈԴԵԼԸ 232
Нарине Нушерванян *– ТРЕХСТОРОНЯЯ МОДЕЛЬ ВЗАИМООТНОШЕНИЙ "ДИАСПОРА-ПРИНИМАЮЩАЯ СТРАНА-РОДИНА".* 240
Narine Nushervanyan *– "DIASPORA-HOST COUNTRY-HOMELAND" TRIANGULAR MODEL OF RELATIONS.* 241

Գևորգ Ղուկասյան – ԱՐԵՎՄՏՅԱՆ ԵՎՐՈՊԱՅԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՓՅՈՒՌՔԻ ԼՈԲԲԻՍՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՇՈՒՐՋ 242
Геворг Гукасян *– О ЛОББИСТСКОЙ ДЕЯТЕЛЬНОСТИ АРМЯНСКОЙ ДИАСПОРЫ В ЗАПАДНОЙ ЕВРОПЕ.* 250
Gevorg Ghukasyan *– ON THE LOBBYING ACTIVITIES OF THE ARMENIAN DIASPORA IN WESTERN EUROPE.* 251

ԱՂԲՅՈՒՐԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ / ИСТОЧНИКОВЕДЕНИЕ / SOURCE STUDIES

Հայկազ Հովհաննիսյան, **Կարեն Բայրամյան** – ՆՈՐԱՀԱՅՏ ՎԱՎԵՐԱԳՐԵՐ ԼԱՉԱՐՅԱՆՆԵՐԻ ԱՐԽԻՎԻՑ 252

Айказ Оганесян, Карен Байрамян *– НОВОВЫЯВЛЕННЫЕ ДОКУМЕНТЫ ИЗ АРХИВА ЛАЗАРЕВЫХ.* 261

Haikaz Hovhannisyan, Karen Bayramyan *– NEWLY REVEALED DOCUMENTS FROM THE LAZAREVS ARCHIVE.* 261

Հովիկ Գրիգորյան, Հայկ Մխոյան – ԴԱՎԻԹ ԱՆԱՆՈՒՆԻ ԵՎ ԼԵՈՅԻ ՆԱՄԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆԻՑ 262

Овик Григорян, Айк Мхоян *– ИЗ ПЕРЕПИСКИ ДАВИТА АНАНУНА И ЛЕО.* 273

Hovik Grigoryan, Haik Mkhoyan *– FROM THE LETTERS OF DAVID ANANUN AND LEO.* 274

ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈԴԱԿԱՆ / УЧЕБНО-МЕТОДИЧЕСКИЙ / EDUCATIONAL-METHODOLOGICAL

Արա Հովհաննիսյան – ՀԱՅԿԱԿԱՆ ՍՓՅՈՒՌՔԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԴԱՍԱՎԱՆԴՈՒՄԸ (ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ՄԵԹՈԴԱԿԱՆ ՈՒՂԵՆԻՇՆԵՐ) 275

Ара Оганесян *– УЧЕБНО-МЕТОДИЧЕСКИЕ ПРИНЦИПЫ И ОСОБЕННОСТИ КУРСА “ИСТОРИЯ АРМЯНСКОЙ ДИАСПОРЫ”.* 281

Ara Hovhannisyan *– EDUCATIONAL AND METHODOLOGICAL PRINCIPLES AND FEATURES OF THE COURSE “HISTORY OF ARMENIAN DIASPORA”.* 282

ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ / РЕЦЕНЗИЯ / REVIEW

Կարինե Եղիազարյան, Մերի Հովհաննիսյան. ЭДИК МИНАСЯН – ГЕРОИЧЕСКАЯ ДЕЯТЕЛЬНОСТЬ АРМЯНОК В ГОДЫ ОСВОБОДИТЕЛЬНОГО ДВИЖЕНИЯ КОНЦА XIX–НАЧАЛА XX ВЕКА, МОСКВА, «ЭДИТУС», 2020, 252 С 283

Էդիկ Մինասյան, Էդիկ Զոհրաբյան. ՀԵՆՐԻԿ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ – ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆԿԱԽԱՑՄԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ՆԱԽԱԴՐՅԱԼՆԵՐԸ ԵՎ ԿԱՅԱՑՄԱՆ ՍԿԻԶԲԸ (1956 Թ. ՓԵՏՐՎԱՐ – 1991 Թ. ՍԵՊՏԵՄԲԵՐ), Ե., ԵՊՀ ՀՐԱՏ., 2019, 398 ԷՋ 286

Վալերի Թունյան, Արա Հովհաննիսյան. «ԴՈՆԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԸ ՆՈՐԱԳՈՒՅՆ ՇՐՋԱՆՈՒՄ. ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ, ԻՆՍՏԻՏՈՒՏՆԵՐ, ԻՆՔՆՈՒԹՅՈՒՆ», ԳԻՏԱԿԱՆ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ /ԿԱԶՄՈՂ Է. ՄԻՆԱՍՅԱՆ/, Ե., ԵՊՀ ՀՐԱՏ., 2020, 212 ԷՋ 288

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ 290

INFORMATION ABOUT THE AUTHORS 292

Ի ԳԻՏՈՒԹՅՈՒՆ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ 294

NOTICE FOR THE AUTHORS 294

Առնակ Սարգսյան

ԸՆՏՐԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱՑՄԱՆ ԻՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ (ՀՀ 2018 Թ. ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐԻՆԱԿՈՎ)

Հիմնաբառեր. *Քաղաքական ինքնություն, ընտրական մշակույթ, ընտրական իրավունք, ընտրական կամք, հանրաքվե, խորհրդարանական ընտրություններ, ՏԻՄ ընտրություններ, քաղաքական երկխոսություն:*

ՄՈՒՏՔ

Քաղաքացիների ակտիվ մասնակցությունը պետության կառավարմանը հանդիսանում է ժողովրդավարական համակարգի և քաղաքացիական հասարակության կայացման հիմնական կառուցակարգերից մեկը: Ժողովրդավարական հասարակարգի առանձնահատկությունն է այն, երբ քաղաքացիները ակտիվորեն մասնակցում են քաղաքական որոշումների ընդունման գործընթացին: Ինչպես նշել է Ա. Լինքոլնը՝ «Ժողովրդավարությունը ժողովրդի կառավարումն է, որն իրականացվում է ժողովրդի կողմից, հանուն ժողովրդի»[1]:

Ներկայումս ակտիվ քաղաքականության մեջ, անհատականացման դրսևորման առանձնահատուկ գործոն է հանդիսանում քաղաքական ինքնությունը: Ինքնության ձևավորումը կոլեկտիվ գործողությունների անբաժանելի մասն է: Քաղաքական ինքնությունը ոչ այնքան անհատի ակտիվությանն ու անհատական ընտրությանն է վերաբերում, որքան հասարակության մեջ իր դիրքորոշմանը: Դրա բացատրությունն այն է, որ հասարակության մեջ նման կարգավիճակն ունեցող քաղաքացիները ունեն նույն քաղաքական ինքնությունը: Նրանք ունեն ընդհանուր հետաքրքրություններ և կիսում են նմանատիպ սոցիալ-տնտեսական, քաղաքական շահեր: Այսինքն՝ դասային ինքնությունը լավագույն արտահայտությունն է. գտնվել նույն սոցիալական դասում կամ կարգավիճակից ելնելով կապվել վերջինիս հետ[2]:

Հարկ է նշել, որ քաղաքացիների ներգրավվածությունը քաղաքական կյանքին կախված է նրանց անհատական վարքագծից, որի վրա մեծ ազդեցություն է թողնում երկրում տիրող իրավիճակը՝ քաղաքական տրամադրվածության և հետաքրքրության շրջանակը: Ի վերջո, հասարակության մեջ յուրաքանչյուրը իր գործունեության միջոցով է ձևավորում քաղաքական մասնակցության միջավայր:

Ի հավելումն նշենք, որ հասարակության մեջ քաղաքական մշակույթի կայացվածությունը դրսևորվում է նաև պաշտոնատար անձանց գործունեության նկատմամբ վստահության և հավատի հիման վրա: Ըստ այդմ, 2018 թ. ՀՀ-ում տեղի ունեցած հեղափոխությունից հետո ձևավորված կառավարության գործունեությունը մեծ դերակատարում ունի հայ հասարակության մեջ մշակութային նոր կառուցակարգերի ներդրման հարցում: Նախկինում քաղաքականությունից ժողովրդի դժգոհությունները և հիասթափությունը իշխանություն-հասարակություն փոխվստահության կորստի հետևանք էր, որն իր անմիջական կնիքն էր թողել յուրաքանչյուր ոլորտի զարգացման վրա: Հետևաբար ներկայիս իշխանությունը միայն համընդհանուրի շահին միտված գործունեության միջոցով կարող է պահպանել ձեռք բերված վստահությունը՝ որպես հասարակարգի արդիականացման ցուցիչ: Իսկ ժողովուրդը կգիտակցի, որ իշխանության լիիրավ կրողն ու իրացնողն է, որն էլ կհանգեցնի քաղաքական ապատիայի ի սպառ վերացմանը:

Նշենք, որ ժողովրդի հիասթափությունը նաև քաղաքական էլիտայի վերարտադրման հետևանք էր. մարդիկ իշխանական էլիտայի փոփոխությամբ ցանկանում էին քաղաքական կյանքը էլիտայի գիլդային մոդելից վերափոխել բացի (անտրեպրեներական)՝ համալրելով նոր կադրերով

** Հոդվածը ներկայացվել է 10.04.2020 թ., գրախոսվել՝ 05.06.2020 թ., ընդունվել տպագրության՝ 15.06.2020 թ.:*

[1] Տե՛ս Цитаты о демократии, http://www.democracy.ru/quotes.php (մուտք՝ 06.03.2020):

[2] Տե՛ս Micheletti M., Individualized collective action, Department of political science, Stockholm University, Aalborg, Denmark, August 14-17, 2002, p. 10.

և ներդնել պետական կառավարման արդյունավետ ընթացակարգեր:

Այսպես, լեհ սոցիոլոգ, քաղաքագետ Ե. Վյատրը հիմք ընդունելով քաղաքական գործընթացներում յուրաքանչյուր քաղաքացու ներգրավվումը (քաղաքական հետաքրքրություն, քաղաքական մասնակցություն և չմասնակցություն) առաջ է քաշել ընտրական մասնակցության ներքոհիշյալ տեսակները՝

1. ակտիվ մասնակիցներ. ընտրական գործընթացը դիտարկում են քաղաքական մասնակցության առանցքային նախապայման և մեծ հետաքրքրություն են ցուցաբերում քաղաքական գործընթացների նկատմամբ,

2. ձեռնհաս դիտորդներ. այս խմբի քաղաքական վարքագիծը ավելի մոտ է առաջին՝ ակտիվ մասնակիցներին: Ճիշտ է, վերջիններս տեղեկացված են քաղաքական գործընթացների վերաբերյալ, բայց քաղաքական պասիվ մասնակցություն են ցուցաբերում,

3. ձեռնհաս քննադատներ. աչքի են ընկնում իրենց ակտիվ մասնակցությամբ, բայց դժգոհ են պետության վարած քաղաքական կուրսից՝ մշտապես հանդես գալով քննադատական մոտեցումներով,

4. պասիվ մասնակիցներ. թեկուզև տեղեկացված են առկա քաղաքական իրողություններին և հետաքրքրված են քաղաքականությամբ, բայց և այնպես չեզոք վերաբերմունք ունեն վերջինիս նկատմամբ,

5. օտարված քաղաքացիներ. ընդհանրապես չեն հետաքրքրվում քաղաքականությամբ, տեղեկացված չեն քաղաքական որոշումների մասին և չեն մասնակցում քաղաքական կյանքին[1]:

Այս առումով նշենք, որ ընտրությունները ժողովրդավարական ինստիտուտների կազմավորման կարևորագույն սկզբունքներից են: Ընտրողի վարքը պայմանավորված է մի շարք գործոններով՝ ինչպես ընտրական իրավունքի սկզբունքներով, այնպես էլ սոցիալական կարգավիճակով, ընտրողների մոտիվացիայով և քաղաքական սոցիալականացման, քաղաքական հասունության մակարդակով: Ընտրական իրավունքը դրսևորվում է ընտրական մասնակցության երկու ձևերով՝ ուղղակի (ընտրական գործընթացը լեգալ կառուցակարգերով կանոնակարգող եղանակ), անուղղակի (ընտրական համակարգը բնորոշող տարբեր գործողությունների միջոցով)[2]: Հետևաբար ընտրական գործընթացի բնույթով կարելի է պատկերացում կազմել քաղաքական համակարգի և վարչակարգի առանձնահատկությունների մասին: Ինչպես միջազգայնորեն սահմանված քաղաքական և քաղաքացիական իրավունքները, այնպես էլ ընտրական իրավունքի նորմերը դեռ հաճախ խախտվում են, բայց համաշխարհայնացման պայմաններում այն անխախտորեն ճանաչված է որպես կարևոր սկզբունք[3]:

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԵՐԸ

Քաղաքականության սուբյեկտների ընտրական կամքի ձևավորման մոտեցումները անհրաժեշտ է համալրել ժամանակակից կառուցակարգերով: Այդ է պատճառը, որ ընտրական և հանրաքվեի իրավունքը քաղաքական կյանքին մասնակցության քաղաքակիրթ և ժողովրդահիշխանության իրականացման կարևոր ընթացակարգերից է: Այն ենթադրում է քաղաքական ներգրավվածության տարբեր ձևեր, որոնք նպաստում են պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների լեգիտիմության հիմքերի ամրապնդմանը[4]:

Ամբողջատիրական վարչաձևի պայմաններում, որտեղ իշխանությունը կենտրոնացված է, ընդդիմության ինստիտուտը և քաղաքացիների կամարտահայտման սկզբունքը իսպառ բացակայում են, տիրապետող է մեկ միասնական գաղափարախոսությամբ միակուսակցական համակարգի գործունեությունը, իշխանությունը տոտալ վերահսկողություն է իրականացնում հասարակական-քաղաքական կյանքի բոլոր ոլորտների վրա: Իսկ ավտորիտար վարչաձևը գտնվում է

---

[1] *Տե՛ս Вятр Е., Социология политических отношений, М., Прогресс, 1979, с. 259-260.*

[2] *Տե՛ս Siber I., Interest in elections and electoral participation, Faculty of Political Science, University of Zagreb, Vol. XLI, 2004, № 5, p. 3.*

[3] *Տե՛ս Carothers Th., The Rise of election monitoring, Journal of democracy, Johns Hopkins University Press, Article, https://muse.jhu.edu/article/16824, (մուտք՝ 14.03.2020):*

[4] *Տե՛ս Ալեքսանյան Ա., Ցիվիլիարխիկ դեմոկրատիա, Ե., 2005, էջ 68:*

ժողովրդավարականի անցման սահմանագծին, որի պայմաններում իշխանության տարանջատման սկզբունքը, մարդու իրավունքների և ազատությունների երաշխավորությունը, ընդդիմության առկայությունը ձևական են:

Այսպես, եթե ժողովրդավարական քաղաքական համակարգի պայմաններում ընտրական գործընթացը կարևոր դերակատարում ունի արդյունավետ գործառնություն իրականացնելու համար, ապա ոչ ժողովրդավարական համակարգերում՝ էական ազդեցություն չունի հասարակական-քաղաքական կյանքում: Բացի այդ ընտրությունները լիարժեք կարող են իրականացնել իրենց գործառույթները միայն այն ժամանակ, երբ վերածվում են ժողովրդավարության հիմնարար ինստիտուտի, քաղաքացիների քաղաքական իրավասուբյեկտության իրականացման եղանակի, պետական կարգի սահմանադրական հիմքի: Ըստ Յու. Վեդենեևի՝ ընտրական իրավունքի իրավաքաղաքական փոխպայմանավորվածությունը կայանում է նրանում, որ, եթե ընտրությունները քաղաքական ինստիտուտ և գործընթաց են, ապա ընտրական իրավունքը դրանց իրավաբանական համակարգն է [1]:

Հարկ է նշել, որ ընտրական իրավունքի սկզբունքները ներառում են մի շարք կարևոր ընթացակարգեր, որոնց առկայության դեպքում ոչ միայն ընտրությունները ճանաչվում են որպես ազատ և թափանցիկ, այլև վերջինիս միջոցով իրականացվելիք կառավարումը լայն ազդեցություն է ունենում ժողովրդավարական համակարգի դրսևորման վրա[2]: Ընտրություններն անհրաժեշտ է իրականացնել ընտրական իրավունքի ազատության և կամավորության չափանիշների հիման վրա: Այսինքն ոչ ոք իրավունք չունի պարտադրելու ընտրողին քվեարկելու որևէ թեկնածուի (կուսակցության) օգտին կամ դեմ, ինչպես նաև հարկադրելու ընտրողին մասնակցելու կամ չմասնակցելու ընտրություններին[3]:

Հասարակական-քաղաքական գործընթացներին մասնակցության կարևորագույն ձևերից է նաև հավաքներին ազատորեն մասնակցելու և դրանք կազմակերպելու իրավունքը: Բացօթյա տարածքներում կազմակերպվող հավաքներն օրենքով սահմանված դեպքերում անցկացվում են ողջամիտ ժամկետում ներկայացված իրազեկման հիման վրա: Իսկ ինչ վերաբերում է ինքնաբուխ հավաքներին, ապա դրանք իրականացնելու համար իրազեկում չի պահանջվում[4]: Անդրադառնանք նաև միություններ ստեղծելու և դրանց անդամագրվելու իրավունքին: Յուրաքանչյուր ոք այլոց հետ միավորվելու, ներառյալ աշխատանքային շահերի պաշտպանության նպատակով արհեստակցական միություններ ստեղծելու և դրանց անդամագրվելու իրավունք ունի: Նշենք, ինչպես հավաքների ազատությունը, այնպես էլ միավորումների ազատությունը կարող է սահմանափակվել միայն օրենքով՝ պետական անվտանգության, հակապետական և հակասահմանադրական գործողությունների և տարաբնույթ հանցագործությունների կանխման, հասարակական կարգի պաշտպանության, առողջության և բարոյականության կամ ուրիշների հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով[5]:

ԸՆՏՐԱԿԱՆ ԵՎ ՀԱՆՐԱՔՎԵԻ ԻՐԱՎՈՒՆՔԸ

Ընտրական և հանրաքվեի իրավունքը՝ որպես «փոխհամաձայնության առանցքային մեխանիզմ», հնարավորություն է ընձեռում անհատներին և քաղաքացիների տարբեր միավորումներին իրականացնել իրենց ցիվիլիարխիկ կամքը[6]: Տեղին է նշել, որ ժողովրդաիշխանության կարևոր ինստիտուտներից մեկը հանրաքվեն է: Այն իշխանության իրականացման ուղղակի, անմիջական ձև է: Դրա միջոցով ընդունված որոշումները անբեկանելի են և ենթակա չեն վերանայման այլ օրենսդիր կամ վերահսկիչ մարմինների կողմից: Հանրաքվեները լինում են տարբեր տեսակի՝

---

[1] *Տե՛ս Веденеев Ю., Новое избирательное право. Очерки по истории выборов и избирательного права, М., 1997, с. 311, (հղումը տե՛ս Ալեքսանյան Ա., Ցիվիլիարխիկ դեմոկրատիա, Ե., 2005, էջ 69-70):*

[2] *Տե՛ս Luttrell C., Nash R., The experience of election observers: lessons for the process of timber verification, Comparative case study 6, Overseas Development Institute, London, January 2008, p. 1.*

[3] *Տե՛ս ՀՀ ընտրական օրենսգիրք, հոդված 4, (25.05.2016):*

[4] *Տե՛ս ՀՀ սահմանադրություն, (փոփոխություններ 06.12.2015), հոդված 44:*

[5] *Տե՛ս նույն տեղում, հոդված 45:*

[6] *Տե՛ս Ալեքսանյան Ա., նշվ. աշխ., էջ 68-69:*

1. սահմանադրական,
2. համազգային,
3. համապետական,
4. տեղական (երբ լուծվում են տեղական նշանակության հարցեր, օրինակ՝ որևէ համայնքում ծագած խնդիր)[1]:

Եթե Ազգային ժողովը մերժում է ընտրական իրավունք ունեցող առնվազն հիսուն հազար քաղաքացու Ազգային ժողովին քաղաքացիական նախաձեռնության կարգով ներկայացված օրենքի նախագծի ընդունումը[2], ապա մերժումից հետո՝ վաթսուն օրվա ընթացքում, օրենքի նախագծի ընդունման նախաձեռնությանը ընտրական իրավունք ունեցող ևս երեք հարյուր հազար քաղաքացու միանալու դեպքում, նախագիծը դրվում է հանրաքվեի, եթե Սահմանադրական դատարանը նախագիծը ճանաչում է Սահմանադրությանը համապատասխանող: Քաղաքացիական նախաձեռնության մասնակիցների ստորագրությունների վավերականությունը հաստատում է Կենտրոնական ընտրական հանձնաժողովը[3]:

Հարկ է նշել, որ հանրաքվեի միջոցով ընդունված օրենքները կարող են փոփոխվել միայն հանրաքվեով: Իսկ նման փոփոխություն կարող է կատարվել համապատասխան օրենքի ընդունումից առնվազն մեկ տարի հետո: Այսպես, հանրաքվեի չեն կարող դրվել այն օրենքների նախագծերը, որոնք վերաբերում են սահմանադրական օրենքների իրավակարգավորման առարկային, պետական բյուջեին, հարկերին, տուրքերին, այլ պարտադիր վճարներին, համաներմանը, պետության պաշտպանությանը և անվտանգությանը, միջազգային պայմանագրերին, ինչպես նաև «Հանրաքվեի մասին» ՀՀ օրենքով սահմանված այլ հարցերի: Այնուհետև, քաղաքացիական նախաձեռնության կարգով ներկայացված օրենքի նախագծի վերաբերյալ Սահմանադրական դատարանի կողմից՝ Սահմանադրությանը համապատասխանելու մասին որոշումն ընդունվելուց, ինչպես նաև ԱԺ կողմից հանրաքվե անցկացնելու մասին որոշումն ընդունվելուց հետո՝ երեսուն օրվա ժամկետում, Հանրապետության նախագահը նշանակում է հանրաքվե[4]:

Փաստորեն, հանրաքվեի դրված ակտն ընդունվում է, եթե դրան կողմ է քվեարկել հանրաքվեի մասնակիցների կեսից ավելին, բայց ոչ պակաս, քան հանրաքվեներին մասնակցելու իրավունք ունեցող քաղաքացիների մեկ քառորդը[5]: Իսկ ռազմական կամ արտակարգ դրության ժամանակ հանրաքվե չի անցկացվում[6]:

Ընտրելու և ընտրվելու, ինչպես նաև հանրաքվեին մասնակցելու իրավունք չունեն դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռով անգործունակ ճանաչված, ինչպես նաև դիտավորությամբ կատարված ծանր հանցանքների համար օրինական դատավճռով դատապարտված և պատիժը կրող անձինք[7]: Իսկ ինչ վերաբերում է օբյեկտիվ ընտրական իրավունքին, ապա այն «սուբյեկտիվ ընտրական իրավունքի աղբյուրն է՝ ներառելով իրավաբանական նորմերի ամբողջությունը, որոնք սահմանում են ընտրական գործընթացի մասնակիցների իրավունքները, պարտականություններն ու պատասխանատվությունը»[8]:

Ուղղակի ընտրական իրավունքը քաղաքացու՝ անմիջականորեն ընտրելու կամ ընտրվելու իրավունքն է: Ազգային ժողովը, տեղական ինքնակառավարման մարմինները, բացառությամբ

---

[1] *Տե՛ս ՀՀ սահմանադրություն, (փոփոխություններ 06.12.2015), հոդված 204:*

[2] *Տե՛ս նույն տեղում, հոդված 109, 6-րդ կետ:*

[3] *Տե՛ս նույն տեղում, հոդված 204:*

[4] *Տե՛ս նույն տեղում, հոդված 206:*

[5] *Տե՛ս նույն տեղում, հոդված 207:*

[6] *Տե՛ս նույն տեղում, հոդված 208:*

**ՀՀ կառավարության որոշմամբ (թիվ 298-Ն) 2020 թ. մարտի 16-ից ՀՀ-ում սահմանվեց արտակարգ դրություն, որը կապված է կորոնավիրուսի համաճարակային իրավիճակի հետ: Արտակարգ դրության պայմաններում հանրաքվե տեղի ունենալ չի կարող: Ապրիլի 5-ին նշանակված Սահմանադրական փոփոխությունների հանրաքվեն կարող է տեղի ունենալ արտակարգ դրության ավարտից հետո ոչ շուտ 50 և ոչ ուշ, քան 65 օր հետո:*

[7] *Տե՛ս ՀՀ սահմանադրություն, (փոփոխություններ 06.12.2015), հոդված 48, 4-րդ կետ:*

[8] *Տե՛ս Ալեքսանյան Ա., նշվ. աշխ., էջ 69:*

Երևան, Գյումրի, Վանաձոր համայնքների ղեկավարների, ընտրվում են անմիջականորեն՝ ընտրողների կողմից[1]:

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿՈԱԼԻՑԻԱՅԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ

ԱԺ կազմված է առնվազն հարյուր մեկ պատգամավորից, ինչպես նաև ընտրական օրենսգրքով սահմանված կարգով տեղեր են հատկացվում ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչներին: ԱԺ ընտրվում է համամասնական ընտրակարգով և ընտրական օրենսգիրքը երաշխավորում է կայուն խորհրդարանական մեծամասնության ձևավորումը: Հարկ է նշել, որ եթե ընտրության արդյունքով կամ քաղաքական կոալիցիա կազմելու միջոցով կայուն խորհրդարանական մեծամասնություն չի ձևավորվում, ապա կարող է անցկացվել ընտրության երկրորդ փուլ: Իսկ երկրորդ փուլի անցկացման դեպքում թույլատրվում է նոր դաշինքների ձևավորումը: Քաղաքական կոալիցիա կազմելու սահմանափակումները և կարգը սահմանվում են ընտրական օրենսգրքով[2]:

Քաղաքական կոալիցիա կազմելու միջոցով խորհրդարանական կայուն մեծամասնության ապահովումն ենթադրում է երկխոսութային կառուցակարգերի՝ քաղաքական բանակցությունների, խորհրդակցությունների ակտիվ կիրառում, քաղաքական փոխզիջումների հասնելու արվեստ և հմտություններ, որոնք անհնար են առանց հասարակական-քաղաքական գիտակցության լուրջ փոփոխությունների, առանց հայ հասարակությունում արմատավորված համապատասխան քաղաքական երկխոսության մշակույթի: Բացի այդ, որքան էլ կատարյալ լինեն քաղաքական փոխհարաբերությունների կարգավորման ինստիտուցիոնալ-նորմատիվային չափորոշիչները, այնուամենայնիվ քաղաքագիտական հայտնի իրողություն է, որ մարդը չափումների չի ենթարկվում, հետևաբար անհատի վարքագիծն անհնար է լիովին ձևայնացնել և ներդնել ինստիտուցիոնալ դաշտում, բացատրել զուտ իրավական-նորմատիվային տեսանկյունից: Այդ իսկ պատճառով, ՀՀ-ում քաղաքական երկխոսության ինստիտուցիոնալացման գործընթացի հաջողությունը մեծապես պայմանավորված է նաև նոր երկխոսութային մշակույթի ձևավորմամբ[3]:

2018 Թ. ԱՐՏԱՀԵՐԹ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2018 թ. դեկտեմբերի 9-ին ՀՀ-ում տեղի ունեցան արտահերթ խորհրդարանական ընտրություններ: Խորհրդարանական ընտրություններին մասնակցության հայտ էին ներկայացրել 11 քաղաքական ուժ՝ 2 կուսակցությունների դաշինք և 9 կուսակցություն (ՀՀԿ, «Քաղաքացու որոշում» սոցիալ-դեմոկրատական կուսակցություն, «Հայ Յեղափոխական Դաշնակցություն» կուսակցություն, «Իմ քայլը» կուսակցությունների դաշինք, «Լուսավոր Հայաստան» կուսակցություն, «Քրիստոնեա-ժողովրդական վերածնունդ» կուսակցություն, «Ազգային առաջընթաց» կուսակցություն, «Մենք» կուսակցությունների դաշինք, «Օրինաց Երկիր» կուսակցություն, «Սասնա Ծռեր» համահայկական կուսակցություն, «Բարգավաճ Հայաստան» կուսակցություն)[4]: Նշենք,

---

[1] *Տե՛ս ՀՀ ընտրական օրենսգիրք, հոդված 5, (25.05.2016):*

[2] *Տե՛ս նույն տեղում, հոդված 97:*

[3] *Տե՛ս Գալստյան Խ., Քաղաքական երկխոսության ինստիտուցիոնալացման հիմնախնդիրները ՀՀ-ում, «Բանբեր Երևանի համալսարանի». միջազգային հարաբերություններ, քաղաքագիտություն, 2016, № 3 (21), էջ 66:*

[4] *Տե՛ս https://res.elections.am/images/doc/09.12.18v.pdf, 09.12.2018, ՀՀ ԱԺ արտահերթ ընտրությունների ԿԸՀ արձանագրություն. կազմվել է 16.12.2018 թ., (ընտրելու հնարավորություն ունեցող 2 մլն. 591 հազար 276 քաղաքացիներից ընտրությանը մասնակցեցին 1 մլն. 261 հազար 105 քաղաքացի, իսկ 2017 թ. 2 մլն. 588 հազար 468 քաղաքացիներից մասնակցել են 1 մլն. 575 հազար 786 քաղաքացի): Համաձայն ԿԸՀ ներկայացրած տվյալների՝ 2018 թ. ՀՀ խորհրդարանական ընտրություններին մասնակցել էին քաղաքացիների 48,63%-ը: ՀՀ յոթերորդ գումարման խորհրդարանը ունի ներքոհիշյալ դասավորվածությունը: Այսպես, ԱԺ անցած 3 ուժերից «Իմ քայլը» դաշինքը ստացավ 84 մանդատ, որին գումարվեց ազգային փոքրամասնության հասանելիք 4 մանդատը, այսինքն՝ ընդհանուր 88 մանդատ (70,42%): Քանի որ «Իմ քայլը» դաշինքի ստացած մանդատների թիվը կազմում է ընդհանուր մանդատների 83,8 տոկոսը, հետևաբար, ընտրական օրենսգրքի համաձայն, պետք է խորհրդարան անցած ոչ իշխանական ուժերին տրվեին լրացուցիչ մանդատներ, որպեսզի ոչ իշխանական ուժերի մանդատների թիվը լիներ ընդհանուր մանդատների թվի 1/3-ը: Այս առումով էլ «Բարգավաճ Հայաստան» կուսակցության ստացած 10 մանդատին ավելացվեց 16-ը, ընդամենը՝ 26 մանդատ (8,26%), որից 13-ը՝ համապետական ընտրական ցուցակով, 13-ը՝ տարածքային ընտրական ցուցակով: Իսկ «Լուսավոր Հայաստան» կուսակցության ստացած 7 մանդատին գումարվեց լրացուցիչ 11 մանդատ,*

որ արտահերթ խորհրդարանական ընտրությունների ընթացքին հետևել էին ինչպես տեղական, այնպես էլ օտարերկրյա մի շարք դիտորդական առաքելություններ: Դրանց թվում էին՝ ԵԱՀԿ ժողովրդավարական հաստատությունների և մարդու իրավունքների գրասենյակը (ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ), ԵԽԽՎ-ն, ԱՊՀ դիտորդական առաքելությունը, ԱՊՀ միջխորհրդարանական վեհաժողովը, ԵԱՀԿ խորհրդարանական վեհաժողովը, Եվրոպական խորհրդարանը, Ազատության և ժողովրդավարության նախաձեռնությունների աջակցություն (SILBA) և Ընտրությունները մշտադիտարկող կազմակերպությունների եվրոպական ցանց (ENEMO) օտարերկրյա հասարակական կազմակերպությունները և այլն:

ՀՀ խորհրդարանական ընտրություններում ժողովուրդը ամրագրեց «Թավշյա հեղափոխության» լեգալ հաղթանակը՝ ձայների բացարձակ մեծամասնությամբ վստահության քվե տալով «Իմ քայլը» կուսակցությունների դաշինքին, իսկ տարիներ շարունակ իշխանական հարթակը զբաղեցնող քաղաքական ուժը՝ ՀՀԿ-ն, նույնիսկ խորհրդարանական անցողիկ շեմը չհաղթահարեց:

Նշենք, որ ներկայիս իշխանությունը կանգնած է մարտահրավերի առաջ: Թե որքանով կհաջողի պահպանել և հետագա ընտրությունների միջոցով ամրագրել իշխանության դիրքերը, պայմանավորված է վերջինիս իրականացվելիք գործունեությունից, որը պետք է ներառի հասարակության յուրաքանչյուր ոլորտի հետևողական ուսումնասիրությունից մինչև պետական կառավարման ապարատի արդյունավետ վերափոխում: Նախորդ իշխանության ձախողումը ժողովրդի վստահության կորստի անմիջական արդյունք էր, որոշ պետական այրերի կողմից սեփական շահը՝ հասարակականից վեր դասելու հետևանք:

ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ ՀՀ-ՈՒՄ

Տեղական ինքնակառավարման մարմիններն են համայնքի ավագանին և համայնքի ղեկավարը, որոնք ընտրվում են հինգ տարի ժամկետով: Ընտրական օրենսգրքով կարող է սահմանվել համայնքի ղեկավարի ուղղակի կամ անուղղակի ընտրություն: «Տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունները լինում են սեփական՝ համայնքի պարտադիր և կամավոր խնդիրների լուծման նպատակով, ինչպես նաև պետության կողմից պատվիրակված: Համայնքի պարտադիր խնդիրները սահմանվում են օրենքով, իսկ կամավոր խնդիրները՝ համայնքի ավագանու որոշումներով»[1]:

Հարկ է նշել, որ Երևանի, Գյումրիի, Վանաձորի ավագանու անդամների մանդատները բաշխվում են այն կուսակցությունների կամ կուսակցությունների դաշինքների միջև, որոնք քվեարկության արդյունքում ստացել են ձայների ընդհանուր, ինչպես նաև անճշտությունների թվի հարաբերակցությամբ՝ կուսակցության դեպքում՝ վեց, իսկ կուսակցությունների դաշինքի դեպքում՝ ութ տոկոս կողմ քվեարկված քվեաթերթիկներ: Եթե վերոհիշյալ սկզբունքով կողմ քվեարկված քվեաթերթիկներ ստացել են երեքից պակաս կուսակցություն և կուսակցությունների դաշինք, ապա մանդատների բաշխմանը մասնակցում են նաև այն երեք կուսակցությունները և կուսակցությունների դաշինքները, որոնք ձայների տոկոսային հարաբերակցությամբ առավելագույն կողմ քվե են ստացել[2]:

Հիշենք, որ 2018 թ. Երևանի քաղաքապետի պաշտոնը թափուր մնալուց հետո՝ երրորդ աշխատանքային օրը, օրենքի ուժով հրավիրվել էր ավագանու նիստ, որում որոշվել էր քաղաքապետի արտահերթ ընտրության օրը, ընդ որում՝ քաղաքապետի պաշտոնը թափուր մնալուց հետո արտահերթ ընտրությունները անցկացվում են ոչ ուշ, քան մեկամսյա ժամկետում՝ քաղաքապետի ընտրությունների համար սահմանված կարգով[3]: Բացի այդ, նախորդ համապետական և տեղական ինքնակառավարման մարմինների բոլոր ընտրություններում ձայների ճնշող մեծամասնությամբ հաղթած ՀՀԿ-ն հայտարարել էր Երևանի ավագանու արտահերթ ընտրություններին

ընդամենը՝ 18 մանդատ (6,37%), որից 9-ը՝ համապետական ընտրակարգով առաջադրված, 9-ը՝ տարածքային:

[1] Տե՛ս ՀՀ սահմանադրություն, (փոփոխություններ 06.12.2015), հոդված 182:

[2] Տե՛ս ՀՀ ընտրական օրենսգիրք, հոդված 141, 3-րդ կետ, (25.05.2016):

[3] Տե՛ս «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին», ՀՀ օրենք, հոդված 46, 1-ին կետ, (26 12.2008):

չմասնակցելու և որևէ քաղաքական ուժի չսատարելու մասին, իսկ ՀԱԿ-ն՝ ոչ միայն ընտրություններին չմասնակցելու, այլև՝ սատարելու հեղափոխություն իրականացրած քաղաքական ուժին[1]: Համաձայն ԿԸՀ ներկայացրած տվյալների՝ Երևանի ավագանու ընտրություններին մասնակցել էին ընտրելու հնարավորություն ունեցող քաղաքացիների 43,65 %-ը, ինչը շուրջ 3%-ով ավելի էր նախորդ ավագանու ընտրություններին մասնակցության ցուցանիշից[2]: Ըստ այդմ, եթե ավագանու ընտրությունների արդյունքով ընտրություններին մասնակցող կուսակցություններից մեկը ստանում է ավագանու անդամների տեղերի հիսուն տոկոսից ավելին, ապա այդ կուսակցության թեկնածուների ցուցակի առաջին հորիզոնականում գտնվող անձը օրենքի ուժով համարվում է ընտրված քաղաքապետ[3]:

Հարկ է նշել, որ չնայած Երևանի ավագանու և ՀՀ խորհրդարանական ընտրությունների նախընտրական քարոզարշավի ժամանակ նկատվող որոշակի լարվածությանը՝ ընտրություններն ընթացան առանց լուրջ միջադեպերի և ընտրախախտումների: Հատկանշական է, որ ընտրությունների արդարության և թափանցիկության հանգամանքը չվիճարկվեց քաղաքական ուժերի կողմից: Այդ հանգամանքը վկայում է այն մասին, որ ՀՀ-ում ընտրական մշակույթը վերածվում է ժողովրդաիշխանության իրականացման ամենաառաջնային մեխանիզմի և աստիճանաբար հասարակության մեջ կարմատավորվի այն համոզմունքը, որ ժողովրդի կամարտահայտման միջոցը ընտրված ներկայացուցիչներն են, և հետագայում իշխանության լեգիտիմությունը պայմանավորված է քաղաքացիների կողմից նրանց վայելած վստահությունից և աջակցությունից: Ընդհանրապես հասարակական համակարգի տարբեր ոլորտների թերզարգացվածության առաջին պայմաններից մեկը վատ ղեկավարումն է, որից բխում են հետագա խնդիրներն ու թերությունները, որն էլ աստիճանաբար հանգեցնում է հասարակության մեջ աբսենտիզմի դրսևորումներին: Այն հանգեցնում է քաղաքացիների չմասնակցությանը քաղաքական որոշումների ընդունման գործընթացին՝ առաջացնելով անվստահություն քաղաքական ինստիտուտների գործունեության նկատմամբ: Իսկ վստահության կորստի դրսևորմանը նպաստում է քաղաքական գործիչների կեղծ խոստումները, անձնական շահը հասարակականից վեր դասելը՝ հանգեցնելով քաղաքացիների համար ընտրական գործընթացի ցածր նշանակությանը:

ԱՄՓՈՓՈՒՄ

Այսպիսով, ամփոփելով վերոշարադրյալը, նշենք, որ առանց քաղաքացիների՝ որպես իշխանության ձևավորման իրավասուբյեկտի, գիտակցության մակարդակի բարձրացման, հնարավոր չէ ժողովրդավարական քաղաքական համակարգին բնորոշ ընտրական գործընթաց իրականացնել՝ անկախ ընդունված նորմերից և վերահսկողական մեխանիզմներից: Բացի այդ, ազատ և արդար ընտրություններ անցկացնելու միջոցով իշխանություն մուտք կգործեն կրթված և մասնագիտական պատրաստվածություն ունեցող անհատներ՝ հանգեցնելով պետական ապարատի արդյունավետության բարձրացմանը և համակարգի հետագա զարգացմանը:

---

[1] Ավագանու արտահերթ նիստը քվորում չապահովելու պատճառով, համարվել էր չկայացած: Առաջադրված միակ թեկնածուն «Երկիր ծիրանի» կուսակցություն նախագահ Զ. Փոստանջյանն էր: Նշենք, որ «Երևանի տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի համաձայն, կառավարությունը կրճատել էր Երևանի ավագանու լիազորությունների ժամկետը, իսկ ԿԸՀ-ն էլ արտահերթ ընտրությունների օր էր նշանակել 2018 թ. սեպտեմբերի 23-ը, որին մասնակցելու համար գրանցվել էին 12 քաղաքական ուժ՝ ութ կուսակցություն և չորս կուսակցությունների դաշինք («Բարգավաճ Հայաստան» կուսակցություն, «Երևանի հանրություն» կուսակցությունների դաշինք, «Երևանցիներ» կուսակցությունների դաշինք, «Երկիր ծիրանի» կուսակցություն, «Ժառանգություն» կուսակցություն, «Ժողովրդավարական ուղի» կուսակցություն, «Իմ քայլը» կուսակցությունների դաշինք, «Լույս» կուսակցությունների դաշինք, «Հայ Յեղափոխական դաշնակցություն» կուսակցություն, «Հայք» կամ (Հայկականներ) կուսակցություն, «Ռեֆորմիստների» կուսակցություն և «Օրինաց երկիր» կուսակցություն):

[2] Տե՛ս http://res.elections.am/images/doc/23.09.18n.pdf, ՀՀ 23.09.2018 Երևանի ավագանու արտահերթ ընտրությունների ԿԸՀ արձանագրություն. կազմվել է 24.09.2018 (848 հազար 346 քաղաքացիներից ընտրությանը մասնակցեցին 370 հազար 365 քաղաքացի, իսկ 2017 թ.՝ մասնակցել է 345 հազար 158 քաղաքացի): Այսպիսով, Երևանի նոր ավագանին գործառնում է հետևյալ դասավորվածությամբ. «Իմ քայլը» դաշինք - 81,06%՝ 57 մանդատ, ԲՀԿ - 6,95%՝ 5 մանդատ, «Լույս» դաշինք - 4,99%՝ 3 մանդատ:

[3] Տե՛ս «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին», ՀՀ օրենք, հոդված 44, 2-րդ կետ, (26.12.2008):

Арнак Саргсян, УЧАСТИЕ В ИЗБИРАТЕЛЬНОМ ПРОЦЕССЕ В РЕАЛИЯХ ДЕМОКРАТИЗАЦИИ (НА ПРИМЕРЕ ВЫБОРОВ В РЕСПУБЛИКЕ АРМЕНИИ В 2018 Г.). Избирательное право и референдум являются одними из важных процедур цивилизованного участия в политической жизни и осуществления демократической власти. Существуют различные формы политического участия, которые способствуют укреплению легитимности государственного управления и местного самоуправления. Примечательно, что электоральная культура в Армении постепенно становится основным механизмом реализации демократического правления, и в обществе все больше осознается тот факт, что средством выражения воли народа являются выборные представители, и легитимность правительства зависит от безусловной поддержки граждан и их доверия.

Ключевые слова: *политическая идентичность, электоральная культура, избирательное право, избирательная воля, референдум, парламентские выборы, выборы в органы местного самоуправления, политический диалог.*

Arnak Sargsyan, PARTICIPATION IN THE ELECTORAL PROCESS IN THE REALITIES OF DEMOCRATIZATION (ON THE EXAMPLE OF THE REPUBLIC OF ARMENIA IN 2018 ELECTIONS). The suffrage and referendum is one of the important procedures for civilized participation in the political life and exercising democratic authority. It suggests various forms of political engagement which promote strengthening of the legitimacy of public administration and local self-government. It is considerable, that the electoral culture in Armenia is gradually becoming the primary mechanism for the realization of democratic sovereignty and the public will increasingly become aware that the means of expression of the will of the people are the elected representatives, and in the future the preservation of the legitimacy of the government will depend on the support of citizens and their trust.

Key words: *political identity, electoral culture, suffrage, electoral will, referendum, parliamentary elections, local self-government elections, political dialogue.*